ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 175-Ա
28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021Թ
ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N1239 որոշման 1-ին կետով հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ, 7-րդ կետերով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող Վ. Քալաշյանի 2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 42/47.1/36104-2021 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արսեն Կարապետյանին 2021 թվականի հոկտեմբերի 28-ին գործուղել ք.Երևան՝ հոկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի և ԵՄ Թվինինգ ծրագրի կողմից համատեղ կազմակերպվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության բարեփոխումների հետագա իրականացմանը» ծրագրի ընթացքի վերաբերյալ քննարկմանը մասնակցելու նպատակով:
2. Գլխավոր հաշվապահին՝ Արսեն Կարապետյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Վայոց ձորի մարզպետարանի ներքին գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Արսեն Կարապետյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

10/28/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ